## ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԻՐԱՆԻ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉ ԳՈՀԱՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

Մեծարգո դեսպաններ, սրբազան հայր, գիտաժողովի հարգարժան մասնակիցներ.

Այսօր մեծ պատիվ է ինձ համար, քանզի գրեթե մեկ տարի առաջ Արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժինը նախաձեռնեց կազմակարեպել այս գիտաժողովը, որն ըստ էության՝ հարգանքի տուրք է Հայաստան-Իրան դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը, զարգացմանը նպաստած բոլոր գործիչներին: Առաջարկը բավական մեծ ոգևորությամբ ընդունվեց, թե՛ Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան մշակույթի կենտրոնի կողմից, թե՛ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի կողմից: Անխոս ճանապարհը դժվար էր, սակայն արդյունքը խիստ բերկրալի է:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ գիտաժողովին կարողացանք ներգրավել նաև նախկին դեսպաններին: Այսպիսի գիտաժողովների կազմակերպումը լավագույն ձևերից մեկն է նրանց գիտելիքները, փորձը նոր սերունդներին փոխանցելու համար: Անշուշտ, հայ-իրանական հարաբերությունների պատմությունը այսպիսով կդրվի ինստիտուցիոնալ մակարդակի վրա, ինչը, հաստատապես կօգտագործվի հաջորդ սերունդների կողմից:

Հարգելի հյուրեր ցանկանում եմ այս ելույթով երախտագիտությունս հայտել հայ և իրանցի բոլոր մեր դիվանագետներին, քաղաքական գործիչներին ում համառ ու աննկուն ջանքերով երբեմն լուծվել են անլուծելի թվացող խնդիրներ: Դրանց

վառ օրինակներն են Մեղրու կամուրջի կառուցումը, Հայաստան-Իրան գազատարի կառուցումը, Հայաստան-Իրան էլեկտրահաղորդման գծերի կառուցումը, առևտրաշրջանառության ծավալների աստիճանական մեծացումը, տարածաշրջանային խնդիրների նկատմամբ հիմնականում նույնական մոտեցումների ցուցաբերումը, այս ամենը մեր երկու երկրների դիվանագետների ամենօրյա աշխատանքի շնորհիվ է իրականացվում:

Այսօր Հայաստան-Իրան հարաբերությունները կանգնած են նոր մարտահրավերների առջև տարածաշրջանային փոփոխված քաղաքականության պատճառով: Այսօր Հայաստանը նույնքան ունի Իրանի աջակցության կարիքը, որքան 1990-ական թվականներին, այսօր Հայաստանը նույնքան կարևոր է Իրանի համար, որքան անկախության առաջին տարիներին, քանզի Հայաստանը հանդիսանում է ոչ թյուրքական աշխարհով անցնող միակ ցամաքային ելքը Իրանի համար:

Գիտաժողովի հարգելի մասնակիցներ շնորհակալ եմ ամենքիցդ ձեր ներդրած ջանքերի համար, առանց որի այս գիտաժողովը կյանքի չէր կոչվի: Շնորհակալ եմ նախկին, ներկա և ապագա բոլոր հայրենանվեր քաղաքական գործիչներին, ովքեր զոր ու գիշեր կաշխատեն ի փառս Հայաստանի Հանրապետության, իսկ մենք՝ գիտականներս պատրաստ ենք ծառայեցնելու այդ գործին մեր գիտելիքները, հետազոտությունները, աշխատանքը: